

**ՀԻՆ ՀԱՅԿԱԶՅԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂՔՈՒՐ**

ՎԱՆՈՒՀԻ ԱՃԵՄՅԱՆ

Մխիթար Սեբաստացու և իր աշակերտների «Բառգիրք հայկազեան լեզուի» գրաբարի ուսումնասիրությանը նվիրված աշխատությունը¹ բառարանագրական սկզբնաղբյուր է նաև միջին հայերենի և աշխարհաբարի պատմության համար:

Եթե Հին հայկազյան բառարանի աղբյուրագիտական արժեքը համեմատաբար դյուրությամբ կարելի է բացահայտել աշխարհաբարի պատմության բնագավառում (դրա համար անհրաժեշտ է պարզապես ուսումնասիրել աշխարհաբար-գրաբար և գրաբար-աշխարհաբար բառարանները, ինչպես նաև գրաբար բառահոսանքների «ռամկորեն» նշումը կրող բառերը), ապա բացառիկ դժվար է այն ի հայտ բերել միջին հայերենի պատմության ոլորտում, քանի որ Մխիթար Սեբաստացին և իր աշակերտները նպատակ չունենալով հատկապես միջին հայերենով զբաղվելու, վերջինիս նպաստել են ոչ անմիջականորեն, անուղղակի կերպով: Վերը հիշված աշխարհաբարին վերաբերող մասերում Հին հայկազյան բառարանը տալիս է արևմտահայ աշխարհաբարի կազմավորման շրջանում գործածական բազմաթիվ բառերի բառարանագրական առաջին վկայությունը, առանձին դեպքերում այդ տեսակետից առաջնությունը զիջելով միայն Մխիթար Սեբաստացու կազմած աշխարհաբարի առաջին տպագիր քերականությանը կցված աշխարհաբար-թուրքերեն բառարանին²:

Մխիթար Սեբաստացու և իր աշակերտների օգտագործած աշխարհաբարում առաջին անգամ արձանագրված են ինչպես հայերեն կամ հայացած բառեր, այնպես էլ թուրքերեն և թուրքերենի միջոցով անցած նորագույն ոչ հայացած փոխառություններ: Հայերեն կամ հայացած բառերի թվում կարելի է տարբերել.

1. Բառեր, որոնք գրաբարի համեմատությամբ նոր կամ նորակազմ են. բերենք մի քանի օրինակ Հին հայկազյան բառարանի համապատասխան բացատրության հետ միասին.

Ակննմուռ, կամ Անկնմուռ. չաթալ պոշով պէօճէկ մի է: || Ունկնամուռ:

Անկնկոթ. գուլաք թօզու: || Սնարք գլխոյ:

Ապայ. հագնելիք: || Ձունձ թաւարծի. ասրապ:

Գոց. գափալը: || տե՛ս Գոցած:

Գոց. գոցելու գործիք. փակ դրան. փէնճիբէի, և այլն. սիւրկիւ. քիւսկիւ: || Ախ. աղխ. փակ. փականք. փախարան. փակաղակ: տե՛ս և Սիւրիկիւ:

¹ «Բառգիրք հայկազեան լեզուի», Ա, Վենետիկ, 1749, Բ, Վենետիկ, 1769:

² «Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց աշխատադրութեամբ տեառն Մխիթարայ վարդապետի Սեբաստացոյ, Վենետիկ, 1727»:

Թալաթօսել: || Վեր ի վերոյ առնել. հարեանցի առնել. հապճեպով վճարել.
շտապաւ կատարել. ակամայիլ ի գործ ինչ. պիտակապէս գործել:

Կովլակ: || տե՛ս Կովլակ:

Կովլակ. ձեռաց մաստէլ. խովայ: || Կթոց. կթարան:

Կովլակ՝ մեծ: || Քուղայ:

Խախֆ ու խաւեր. ճառիս մալամաթ: || Այսն և կատակ. այսնակատակ. խա-
ղակատակ. ծաղակատակ. ծաղածանակ. ծաղրալից. ձաղակոծ. դառ-
նածաղր. չարածաղր³:

2. Բառեր, որոնք հին հայերեն համապատասխան անվանումների հնչու-
նափոխված ձևերն են, ինչպես՝ անկան, սորեկ, խաւոդ, խաւել և դաւել, խո-
ւորոբա, հեղդակ⁴, Հին հայկազյան բառարանի գրաբարի բառացանկերի՝
ականջ, սորեակ, խաղոդ, ուղեւորել, խորտաբորտ, հեղեղակ⁵ համապատաս-
խան բառերի համար: Վերոհիշյալ բառերից միայն անկան և խախֆ բառ-
ձևերին առաջին անգամ հանդիպում ենք Սեբաստացու աշխարհաբարի քերա-
կանությանը կցված հայերեն-թուրքերեն համառոտ բառարանում⁶:

3. Բառեր, որոնք նույն ձևով գոյություն ունեն գրաբարում, ուստի և նույ-
նությամբ վկայված են Հին հայկազյան բառարանի գրաբար և աշխարհաբար
բաժիններում: Ահա դրանցից մի քանիսը աշխարհաբար-գրաբար բառարա-
նում ունեցած իրենց նշանակությամբ հանդերձ.

Աթար. թրիք զոր պատը կը զարնեն: || Աթար. քակոր:

Թեռ. բրթէ ոլըրած թել: || Թեռ. ասուի:

Լոկոն. լէօքիւն: || Լոկոն:

Խածաղ. բոհրած կամ խածղած ցորեն: || Խածաղ. մուրկ ցորենոյ:

Հոսելի. եսիայ վամ եսպայ. թէրէքէ. սաւուրաճաք արէթ: || Հեծանոց. հոսիչ.
թափիչ. հոսելի:

Հօտաղ. սպասաւոր մանուկ՝ երնողաց զկալ: || Հօտաղ⁷:

Թուրքերեն կամ թուրքերենի միջոցով անցած նորագույն, ոչ հայացած
փոխառությունների թվում հիշենք աշխարհայ և աշխարհի ընել նույն աշխարհա-
բար-գրաբար բառարանում տրված համապատասխան բացատրությամբ:

Աշխարհայ. Աշխարհի ընել: || տե՛ս Պատրուսած. Պատրուսել⁸:

Կազմության տեսակետից հատուկ հետաքրքրություն է ներկայացնում
խառըշարկել կամ խառըշտկել բայը, որ առանձին հայագետների կարծիքով
առաջացել է գրաբար խառնել և թուրքերեն գաղըշտըմաֆ բառերի միախառ-
նումից⁹:

Խառըշարկել, կամ խառըշտկել. խառնքտրկել. գաղըշտըմաք. գաղըշպոտուշ
էթմեք: || Խառնել. խառնակել. խառնափնդորել. խոռել: տե՛ս և խառ-
նել¹⁰:

³ «Բառգիրք հայկազեան լեզուի», Բ, Բառգիրք աշխարհաբարէ ի գրաբարն:

⁴ նույն տեղում:

⁵ նույն տեղում, Ա, Բ:

⁶ «Դոտն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց»:

⁷ «Բառգիրք հայկազեան լեզուի», Բ:

⁸ նույն տեղում:

⁹ J. Karst, Wörterbuch des Mittelarmerischen Historisch-Etymologisch Auf grund der alten sprache und unter Berücksichtigung der Neuarmeniscnen dialekte, Stras-
bourg, 1940—1942.

¹⁰ «Բառգիրք հայկազեան լեզուի», Բ:

Վերոհիշյալ բառերից ոչ մեկը արտահայտված չէ Հին հայկազյան բառարանից առաջ լույս տեսած Ֆրանցիսկո Ռիվոլայի¹¹, Կղեմես Գալանոսի¹², Երեմիա Մեղրեցու¹³, Հովակիմ Շրոգերի¹⁴ բառարաններում: Ինչ վերաբերում է Հակոբ Վիլոտի 1714 թ. հրատարակված լատիններեն-հայերեն բառարանին¹⁵, որի հայերեն բառահոգվածների vulgaris, այսինքն՝ ռամկորեն նշումները վերաբերում են ժամանակի ժողովրդա-խոսակցական լեզվից քաղված որոշ բառերի, պետք է նկատի ունենալ, որ այն աշխարհագրորդ ուսումնասիրության սկզբնաղբյուր չէ, քանի որ 1) ծառայում է միայն լատիններեն իմացողներին, 2) հայերեն բացատրությունները կամ բառահոգվածները լեզվական տեսակետից կայուն սկզբունքով չեն կազմված. միշտ չէ, որ նրանց մեջ տեղ գտած ռամկորեն բառերին կցված է vulgaris նշումը, 3) հեղինակի հիմնական նպատակը եղել է կազմել լատիններեն-գրարար բառարան:

Այսպիսով, մեր ձեռքի տակ եղած բառարանների տվյալները հաստատում են, որ վերը հիշված բառերի աշխարհագրում գործածվելու բառարանագրական առաջին վկայությունը Մխիթար Սեբաստացին և իր աշակերտներն են տվել: Հին հայկազյան բառարանում նման բառերի թիվը, իհարկե, մեր բերած օրինակներով չի սահմանափակվում, ուստի և ակներև է այն փաստը, որ այդ բառարանը աշխարհագրորդ ուսումնասիրության արժեքավոր սկզբնաղբյուր է:

Ինչպես արդեն ասացինք, Հին հայկազյան բառարանը կարևոր է նաև միջին հայերենի ուսումնասիրության համար. նպաստելով աշխարհագրորդ բառապաշարի պատմությանը, այն անուղղակի կերպով նպաստել է նաև միջին հայերենի պատմությանը: Այդ տեսակետից մեծ է նրա մատուցած ծառայությունը միջին հայերենի ամենահմուտ հետազոտողներից մեկին՝ օտարազգի հայագետ Կարստին: Հայտնի է, որ վերջինս իր միջին հայերենի պատմաստուգաբանական բառարանը կազմել է հիմք ընդունելով հին հայերենը, միաժամանակ հաշվի առնելով նոր հայկական բարբառները¹⁶: Նոր հայկական բարբառների տվյալների օգնությամբ խորաթափանց գիտնականը մտածել է ըստ հնարավորին վերականգնել միջին հայերենի բառապաշարի այն մասը, որի համար ինքը ձեռքի տակ գրավոր վկայություններ չի ունեցել: Դժվարին և խելացի մտահղացում, որ նա փորձել է իրագործել ի թիվս այլոց նաև Հին հայկազյան բառարանի միջոցով: Այսպես, Կարստի բառարանում աստղանիշով սահմանազատված են բազմաթիվ նոր հայկական գավառա-բարբառային բառեր, որոնք, հեղինակի իսկ բացատրությամբ, ծառայում են երկու նպատակի.

1. Երաշխիք են հանդիսանում հին հայերենում միջին հայերենի սկզբնավորման կամ արմատաձգման:

¹¹ „Dictionarium armeno-latinum, Autore Francisco Rivola. Lutetiae parisiæ“, 1633 (Ա հրատարակությունը 1621 թ., Միլանում):

¹² „Grammaticae et logicae Institutiones, Linguae Literallis Armenicae Armenis traditae AD. Clemente Galano, Addito Vocabulario Armeno-Latino omnium scholasticarum Dictionum“, Romae, 1645.

¹³ «Բառգիրք հայոց», Կ. Պոլիս, 1728 (Ա հրատարակությունը 1698 թ., Ալիզանդրում):

¹⁴ Joh. Joachimi Schröderi, Thesaurus Linguae Armenicae, Antiquae et Hodierinae, Amstelodami, 1711.

¹⁵ Jacobo Villotte, Dictionarium novum Latino-Armenium, Romae, 1714.

¹⁶ J. Karst, նշվ. աշխ.:

2. Պատմա-բանահյուսական տեսակետից ամբողջացնում են միջնադարյան լեզվական բնագավառը:

Կարստի այս սահմանադատումը հանելուկային և անհասկանալի կարող է մնալ նույնիսկ ամենալավ գերմանագետներին, եթե նկատենք, որ վերոհիշյալ հատկանիշներից զուրկ չեն բառարանում նաև աստղանիշ չկրող մի շարք բառեր:

Տվյալ դեպքում մեզ համար միակ բանալին Կարստի բառարանի համեմատությունն է Հին հայկազյան բառարանի հետ: Ակնհայտ է, որ ըստ համապատասխան բառահոգվածներում բերված վկայությունների՝ աստղանշավոր բառերի շարքում կարելի է տարբերել.

1. Բառեր, որոնք վկայված են միջին հայերենի շրջանից (ma նշումով). վերջինս ըստ Կարստի ընդգրկում է X—XV դդ.:

2. Բառեր, որոնք վկայված են ետմիջինհայերենյան շրջանից (spāt-ma նշումով): Մեր կարծիքով, ետմիջինհայերենյան անվանումով Կարստը, ամենայն հավանականությամբ, նկատի է ունեցել XVI դ., քանի որ XVII դ. վկայված բառերի համար կան աղբյուրների հեղինակային նշումներ, երբեմն վազ աշխարհաբար (Früh na) հարակից նշումով:

3. Վերոհիշյալ ենթախմբերի մեջ չմտնող մնացյալ աստղանշավոր բառերը, բնականաբար, Կարստի հավաքած այն նոր հայկական գավառա-բար-բառային բառերն են, որոնք սկսել են վկայվել XVIII դ.: Կարստի բառարանի համեմատությունը Հին հայկազյան բառարանի հետ պարզեց, որ դրանց թվում են վերը հիշված այն բոլոր բառերը, որոնց աշխարհաբարում գործածվելու բառարանագրական առաջին վկայությունը, ինչպես ցույց տվեցինք, Հին հայկազյան բառարանին է պատկանում:

Հարց է ծագում՝ ինչի՞ հիման վրա միջին հայերենում և ետմիջինհայերենյան շրջանում չվկայված այդ բառերը, այնուամենայնիվ, մտցվել են միջին հայերենի բառարանում: Կարստի համար այստեղ հիմք է ծառայել այն, որ Հին հայկազյան բառարանում արձանագրված վերոհիշյալ ռամկորեն բառերը, որոնք հեղինակների կողմից բժախնդրորեն ընտրվել են ժամանակի ամենատարածված խոսակցական աշխարհաբարից, չէին կարող ստեղծված լինել բառարանի հորինման ժամանակ՝ XVIII դ. սկզբներին: Նրանք, անկասկած, պետք է որ գոյություն ունեցած լինեին ժողովրդի բանավոր լեզվում շատ ավելի վաղ, այսինքն՝ միջին հայերենի շրջանում, քանի որ, ինչպես իրավացիորեն նշել է ականավոր հայագետ՝ Արսեն Այտընյանը, լեզվական նոր որակը չի կարող առաջանալ հանկարծակի և ոչ իսկ մեկ կամ երկու դարի ընթացքում¹⁷: Առաջին անգամ Հին հայկազյան բառարանում ընդգրկված աշխարհաբար բառերը տեղ են գտել Կարստի բառարանում, որովհետև, հեղինակի բանական դատողությամբ, նրանք, բոլորը միասին վերցրած, պատմա-բանահյուսական տեսակետից ամբողջացնում են միջնադարյան լեզվական քննադավառը, իսկ նրանց այն մասը, որ հին հայերենից նույնությամբ կամ հնչյունափոխությամբ նոր հայերենին է անցել, երաշխիք է հին հայերենում միջին հայերենի սկզբնավորման կամ արմատաձգման:

¹⁷ Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Նախաշավիղ, Վիեննա, 1866, էջ 161:

Միտիթար Սերաստացու և իր աշակերտների հորինած «Բառգիրք հայկազյան լեզուի» աշխատությունը հիմք հանդիսացավ հայոց լեզվի գիտական պատմության ստեղծման համար:

СТАРОАРМЯНСКИЙ (АЙКАЗЯНСКИЙ), СЛОВАРЬ — ПЕРВОИСТОЧНИК ПО ИЗУЧЕНИЮ ИСТОРИИ АРМЯНСКОГО ЯЗЫКА

ВАНУИ АДЖЕМЯН

Резюме

Посвященный изучению староармянского языка, словарь «Баргирк Айказян лезви» («Словарь армянского языка») («I, Венеция, 1749», «II, Венеция, 1769») в то же время является ценным словарным первоисточником по среднеармянскому и новоармянскому языкам. Включенные в него словари ашхарабар-грабар и грабар-ашхарабар, а также просторечные объяснения, встречающиеся в староармянских статьях, содержат многие новоармянские слова, которые незнакомы предшествующим «Баргирк Айказян лезви» и печатным словарям XVII и XVIII вв. Часть этих слов не засвидетельствована в известных арменоведе Карсту памятниках средневекового периода, но они включены в его историко-этимологический словарь среднеармянского языка. Согласно Карсту, эти слова не могли появиться в армянском языке внезапно, во время составления «Баргирк Айказян лезви», а должны были существовать в устной речи армянского народа несколько веков тому назад, в средневековый период.